ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ԳՀԱՊՁԲ-22-12/1-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 14 .03.2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՖԻՈՆԱ ՖԼՈՐԱ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Դավթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 07.02.2022թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-22-12/1-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայնագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի №1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 5 470 600 (հինգ միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունները լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը (կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ՊՆ Տ և ՀԿԳՎ ՀԿ վարչություն):

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՖԻՈՆԱ ՖԼՈՐԱ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Հ. Ներսիսյան 2/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	բանկ ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2052222073541001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 08619935
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Կ.ԲՐՈՒՏՅԱՆ	Ս.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-22-12/1-2 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑԱ

Չ/Հ	Անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը ՀՀ դրամ	Ընդամենը ՀՀ դրամ	Ապրանքների մատակարարումը 2022թ. 1-ից 4-րդ եռամսյակների ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2022թ.
1	Ծաղիկներ	հատ	13500	140	1890000	Ըստ ՀՀ ՊՆ Տ և ՀԿԳ վարչության կողմից տրված հայտերի
2	Ծաղկային կոմպոզիցիաներ (Ծաղկեպսակ փոքր)	հատ	36	31600	1137600	
4	Ծաղկային կոմպոզիցիաներ (Ծաղկեզամբյուղներ)	հատ	349	7000	2443000	

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-22-12/1-2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑԱ

Գնման առարկայի			Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 26.12.2022թ., ընդ որում			
Չ/հ	անվանումը	CPV կոդը	1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	Ծաղիկներ	03121200/504	470610	926100	1398600	1890000
2	Ծաղկային կոմպոզիցիաներ (Ծաղկեպսակ փոքր)	03121210/511	295776	591552	887328	1137600
4	Ծաղկային կոմպոզիցիաներ (Ծաղկեզամբյուղներ)	03121210/513	500000	1000000	1700000	2443000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՖԻՐՈՆ ՖԼՈՐԱ» ՍՊԸ
Տնօրեն

ԱՎԱԳԹՅԱՆ